ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2022 թվականի №Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Դիմող անձ) 2022 թվականի օգոստոսի 8-ի №ՊՆ/510/3794-2022 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ անհրաժեշտ է գազիֆիկացնել հանրապետության մի շարք քաղաքներում տեղակայված օբյեկտներ (այսուհետ՝ Օբյեկտներ): Դիմող անձը խնդրել է Հանձնաժողովի միջամտությունը՝ ստանալու Օբյեկտների գազիֆիկացման տեխնիկական պայմանները և սեփական ուժերով իրականացնելու գազիֆիկացման աշխատանքները,

բ) Դիմող անձը 2022 թվականի սեպտեմբերի 22-ի №ՊՆ/510/4505-2022 և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի սեպտեմբերի 26-ի №02/18.1/2889 գրություններով հայտնել են, որ չեն առարկում Օբյեկտների գազիֆիկացման աշխատանքները սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95Ն որոշմամբ հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների 10.15-րդ կետը ՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) Սույն որոշման հավելվածում նշված բնակավայրերում գտնվող Օբյեկտները գազիֆիկացվում են Դիմող անձի դիմումի համաձայն, Ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանների հիման վրա, բնական գազի

մատակարարման և օգտագործման կանոնների 10.2 գլխում նշված ընթացակարգով.

2) Ընկերությունն իրավունք չունի Դիմող անձից պահանջել ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն սույն որոշմամբ կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հոկտեմբերի 2022թ.